# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 66 | Կոստյում՝ ամառային, գունաքողարկված , ՛՛ՀՆՁ՛՛, ամենօրյա /բաճկոն և տաբատ/: Մարտական ամառային համազգեստը (կոստյումը) բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրված է ԱՄՆ հատուկ նշանակության զորքերի մոխրագույն, պիկսելային գունաքողարկմամբ, կամ համարժեք, «Ռիպստոպ» տեսակի նույն գունավորմամբ գործվածքից, 1մ2 մակերասային խտությունը՝ 215գր-235գր, բաղադրությունը՝ բամբակ, պոլիէսթեր և այլ նյութերի համադրմամբ: Բաճկոնը միալանջ, կոճկվում է գաղտնի կենտրոնական կոճկվածքով 5 օղակ կոճակներով: Բաճկոնն ունի 5,0-5,2սմ լայնությամբ , ուղղանկյունաձև կանգունակով օձիք, որի ծայրերի վերին հատվածը կլորացված է: Օձիքը կանգնած վիճակում է, կոճկվում է ախլակով, դրսից և ներսից ունի կպչուն ժապավեններ, որը չափերով ավելի նեղ է և չի վնասում վիզը, ախլակի վերին հատվածը կլորավուն է: Օձիքի միացման կարում, ներսից մշակված է կախիչ: Բաճկոնի առաջամասը և փեշամասերը ուղիղ ձևացքով, տաբատի մեջ դնելու հնարավորությամբ: Թևատակերին առկա են կանաչ գույնի հովացման, օդափոխման եռանկյունաձև ցանցեր: Բաճկոնի առաջամասի կրծքամասում /կոկետկայի տակ/ մշակված են ծավալային, վրադիր երկու գրպաններ կափույրներով, որոնք տեղակայված են կրծքամասում, կենտրոնական ուղղահայաց կարերից 1.5-2,3սմ հեռավորության վրա: Կրծքամասի գրպանի լայնությունը 14-14,5սմ, խորությունը 14,5-16,0սմ, կափույրը 6,7-7,2սմ: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով, որոնց անկյունները շեղ կտրվածքներով են: Ձախ գրպանի կափույրի մեջտեղում, ներսամասից նախատեսված է գրիչների համար գրպանիկ, 4.5սմ լայնությամբ կտրվածքով: Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով 4 օղակ |

| | |
|---|---|
| | կոճակներով: Առաջամասի աջ գրպանի կափույրից 0.5մմ վերևը կարով ամրացվում է «ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՁՈՐՔԵՐ» ասեղնագործ կրծքանշան, իսկ ձախ գրպանի վերևին ամրացվում է 12.8x2.8սմ ձևաչափի ասեղնագործ, կպչուն ժապավենով «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» գրառմամբ կրծքանշան: Բաճկոնի հետևամասը բաղկացած է կոկետկայից և հետևամասից, որի երկու կողմերում ՝ կոկետկայից դեպի ներքև, մշակվում է 3սմ լայնքով կողային, ծավալային ծալքեր: Ձևվածքը ապահովում է թևերի ազատ շարժը: Գոտկատեղում ներսից 3,5-4 սմ լայնքով մշակվում է կտոր գաղտնի գոտու համար, որի միջով անցկացվում է կարգավորվող էլաստիկ ժապավեն ռեզին, որը ներսից կոճկվում է 2 հատ պլաստմասե կոճակով: Թևքերին տեղադրվում են շեղ կտրվածքներով կափույրներ, որոնք ունեն առաջամասում ծավալուն, վրադիր գրպաններ ( լայնությունը 14սմ, խորությունը 15սմ, կափույրը 6,-6,5սմ) , որոնք կոճկվում են զույգ կոճակներով՝ գաղտնի կոճկվածքով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 15 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են, լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև /անկյունները շեղ կտրվածքով/ արմնկակալներ, որոնք 12-14սմ լայնքով սկսվում են արմունկի վերևի հատվածից և շարունակվում մինչև բազկակալներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է «ՀՀ ԱԱԾ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՁՈՐՔԵՐ» թևքանշանը: Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև կտրվածքով պատաններ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ կոճակ օղակով: Կրծքամասի կենտրոնում տեղադրված է (5սմ * 8սմ չափսի) ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակը կոճկվում է ինքնակպչունով: Աստառը մոխրագույն կամ դարչնագույն, բամբակյա /բիազ 100 գր/մ2/ գործվածքից է, ձգվում է ուսերից թիկունքի հատվածում՝ մինչև կոկետկա և կրծքավանդակի հատվածում՝ մինչև գոտկատեղի գաղտնի գոտի: Աստառի ձախ կրծքամասում մշակված է վրադիր ծոցագրպան, որը կոճկվում է 14-15մմ կոճակով: Տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը կոճկվում է 1 հատ գոտու վրա 18-20մմ կոճակով սովորական կոճկվացք, և 4 հատ 14-15մմ կոճակով բացվածքի վրա՝ փակ գաղտնի կոճկվածքով (15-17սմ բացվածք՝ ըստ չափսերի), կոճակ օղակներով: Տաբատի կոնքային հատվածի ձևը թույլ է տալիս մարտիկին ազատ շարժումներ կատարելը և առաջամասի գրպաններից օգտվելը: Տաբատի դիմացից լայն բացվածքը ապահովում է հեշտ և արագ հագնելը: Տաբատի հետևամասում մշակվում են 2 հատ կափույրով, վրադիր ամբողջությամբ ծավալային կախովի գրպաններ՝ գրպանի լայնությունը 13սմ, խորությունը 11-12սմ, 5,5-6,0սմ անոց վրադիր կափույրներով, կոճկվող (ապահովում է 3սմ ծավալային բացվածք): Նստատեղի հատվածում մշակվում են լրացուցիչ զարդակարերով օվալաձև երկտակ նստատեղային գործվածք: Գուլֆիկը՝ գոտին, աջ և ձախ հատվածներում, ներսից ունի 8-10 սմ երկարությամբ,3սմ լայնքով ռեզինային, գոտու չափը կարգավորող էլաստիկ, ձգվող հատվածներ (շիպլետ) : Գոտին |

5.2-5.5սմ լայնությամբ է որի վրա մշակված է 8 հատ 1.2-1.3սմ լայնքով և 5.3 սմ բացվածքով կամրջակներ: Հետևի մասի 2 կամրջակները ամրակարված են և կարող են ավելի լայն լինել, որպեսզի ապահովեն՝ կախոցի և պարանի միջոցով, քաշելով, մարտիկի դուրս բերումը կրակի գոտուց: Տաբատին՝ գոտկատեղից ներքև, կողքերից թեք ներկարված են 17-18սմ բացվածքով, 14-16սմ խորությամբ աջ և ձախ գրպաններ (180-200գր/մ2 բյազ): Գրպանների ստորին եզրից 2 սմ ներքևից, կողքերից, 2 հատ կափույրով վրադիր, եռածալ, ծավալուն գրպաններ են: Կողային գրպանների կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասը կոճկվող է և կոճկվում են գաղտնի կոճկվածքով, մեկական կոճակ օղակներով: Գրպանի լայնությունը ստորին հատվածում 19-20 սմ, իսկ վերին բացվածքում 21սմ, խորությունը 21 - 23սմ (ըստ չափս-հասակի), եռածալ, ծալքերի լայնությունը 5սմ, հետին հատվածում ծավալային (ապահովում է 4սմ ծավալային բացվածք): Տաբատի առաջամասում՝ ծնկներին, մշակվում են վրակարված, քառանկյուն ծնկակալներ: Տաբատի փողքերի ծալքի մեջ մշակվում է էլաստիկ, ռետինային ժապավեն , չափսը կարգավորելու համար, որոնց հանգուցված ծայրերը դուրս են գալիս ծալվածքի ներսամասում արված անցքերից՝ միմյանց կապելու համար: Տաբատի փողքերը ծալված միակար կարված են: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18մմ և 14-15մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ մոխրագույն կամ դարչնագույն պաշտպանական: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (4սմ*5սմ), որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվացքի 300C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 3 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 լրակազմ, տեսականին (յուրաքանչյուր լրակազմը) պոլիէթիլենային թափանցիկ պարկի մեջ, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը 2%: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Մարտական համազգեստի ձևը և գոնավորումը, չափումների բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար, մինչ

| | |
|---|---|
| | արտադրելը, Պատվիրատուին է ներկայացվում 3 լրակազմ (48/4, 52/3, 58/2 չափս-հասակի) արտադրանքի փորձանմուշներ: Պատվիրատուի հետ պատվերի ճշտությունը համաձայնեցվելուց հետո Կատարողին տրամադրվում է չափս-հասակային, արյան կարգերի քանակական տվյալները, խմբաքանակը արտադրելու համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 66 | Костюм летний, камуфляжный, “ВОН”, повседневный (куртка и брюки) Летняя боевая форма (костюм) состоит из куртки и брюк. Изготовлено в серой, пиксельной окраске войск специального назначения США или аналогичной окраски, из ткани типа "рипстоп" той же окраски, поверхностной плотностью на 1 м2 - 215-235 г, состав: хлопок, полиэстер и другие материалы. Куртка: однобортная, застегивается на потайную центральную застежку с 5 петлями и пуговицами.Куртка имеет стоячий воротник прямоугольной формы шириной 5,0-5,2 см с закругленной верхней частью на углах. Воротник стоячий, застегивается на хлястики с липучками снаружи и изнутри, которые по размерам меньше и не травмируют шею, верхняя часть хлястика округлая На соединительном шве воротника пришивается петля-вешалка. Передняя и нижняя (полы) части куртки прямого покроя, с возможностью заправки в брюки. На груди куртки спереди (под кокеткой) расположены два объемных накладных кармана с клапанами, расположенных на груди на расстоянии 1,5-2,3 см от центральных вертикальных швов. Ширина нагрудного кармана 14-14,5 см, глубина 14,5-16,0 см, клапан 6,7-7,2 см. Клапаны накладных карманов украшены строчкой шириной 0,5 см с косыми разрезами по углам. На уровне середины клапана левого кармана с внутренней стороны предусмотрен карманчик для авторучек с вырезом шириной 4,5 см. Передние карманы застегиваются на потайную застежку с 4 петлями и пуговицами. Вышитый значок "ВОЙСКА ОСОБОГО НАЗНАЧЕНИЯ" прикреплен строчкой на 0,5 мм выше клапана правого кармана на нагрудной части, а вышитый значок формата 12, 8х2, 8 см с надписью "ГРУППА КРОВИ" крови» прикреплен липучей лентой |

| | | |
|---|---|---|
| | | к верхней части левого кармана. Задняя часть куртки состоит из кокетки и спинки, по обеим сторонам которой, от кокетки вниз, проработаны боковые объемные складки шириной 3 см. На талии с внутренней стороны проработан фрагмент шириной 3,5-4 см для потайного пояса, через который продета регулируемая прорезиненная полоса, застегивающаяся на 2 пластиковые пуговицы с внутренней стороны. На рукавах расположены клапаны с косым вырезом, которые спереди имеют объемные накладные карманы (ширина 14 см, глубина 15 см, клапан 6-6,5 см), застегивающиеся на парные застежки с потайными пуговицами. Наклон карманов внутрь по отношению к плечевым швам составляет 15 градусов. Клапаны накладных карманов украшены декорированык строчкой шириной 0,5 см. На участках локтя прорабатываются дополнительные налокотники прямоугольной формы /углы с косым вырезом/ шириной 12-14 см, с двойным декоративным швом, начинающиеся с верхней части локтя и продолжающиеся до середины средней части руки. Соединительные швы по бокам, рукавам и плечам прошиваются парой закрытых строчек. В центре кармана на левом рукаве пришивается нарукавный знак (шеврон) "ВОЙСКА ОСОБОГО НАЗНАЧЕНИЯ СНБ РА". Низ рукавов украшен прорезями с угловым вырезом, которые застегиваются на одну петлю с пуговицей в пройме. На плечах расположены погоны(размером 5 см х 8 см) из той же ткани, что и на хлястиках, хлястики застегиваются петлей на одну пуговицу. Подкладка серого или коричневого цвета, из хлопчатобумажной ткани / бязь 120 г/м2/, простирается сзади - от плеч с до кокетки, и спереди на грудной части - от груди до потайного пояса на талии. На левой стороне груди на подкладку нашивается накладной внутренний карман, застегивающийся на пуговицу 14-15 мм. Брюки состоят из передней части, задней части и пояса. Передняя часть застегивается на 1 обычную петлю с пуговицей 18 -20мм на поясе и 4 петли с пуговицами 14-15 мм на разрезе- закрытой потайной застежкой (ширинка - 15-17 см в зависимости от размера). Форма брюк в области таза позволяет бойцу свободно двигаться и использовать передние карманы. Широкий раскрой спереди брюк обеспечивает легкое и быстрое одевание. На задней части брюк выполнены полностью 2 объемных подвесных кармана на подкладке шириной 13 см, глубиной 11-12 см, с накладными клапанами на 5,5-6,0 см, застегивающимися на пуговицы (обеспечивает объемный разрез 3 см). На участке седалища проработана двуслойная овальная покройка для седалища с дополнительными декоративными швами. На участке седалища проработана двуслойная овальная покройка для седалища с дополнительными декоративными швами. Ширинка и пояс в правой и левой частях имеют прорезиненные эластичные секции длиной 8-10 см, шириной 3 см, регулирующие размер пояса, с внутренней стороны (шиплет). Пояс имеет ширину 5,2-5,5 см, на поясе проработано 8 петель шириной 1,2-1,3 см и зазором 5,3 см. 2 перемычки на спине вшиты и могут расширяться, чтобы с помощью подвески и веревки |

| | |
|---|---|
| | вытягивать бойца из зоны обстрела. На брюках, ниже талии, по бокам наискось вшиты правый и левый карманы с прорезями 17-18 см, глубиной 14-16 см (180-200 г/м2 бязь). Передняя часть клапанов боковых карманов фиксируется стеганым швом, а задняя часть застегивающаяся и застегивается на потайную застежку с петлями на одну пуговицу. Ширина кармана в нижней части 19-20 см, а на участке верхнего разреза - 21 см, глубина - 21-23 см (в зависимости от размера и роста), карман тройной складки, ширина складок - 5 см, объемный в задней части (обеспечивает объемное раскрытие на 4 см). Спереди брюк, на коленях, проработаны нашитые четырехугольные наколенники. В обшлаги брюк на завязках для регулировки размера встроена эластичная резиновая лента, завязанные концы которой выступают из отверстий, проделанных на внутренней стороне обшлагов, для соединения друг с другом. Обшлаги брюк загнуты и прошиты одиночным швом-строчкой. Стыковые швы на внутренней, внешней и задней частях прошиты закрытой парой швов. Все стыковые швы куртки и брюк сшиты закрытыми парными стежками цепочкой внахлест.Пуговицы на форме - диаметром 18 мм и 14-15 мм, изготовлены из термостойкого (не плавящегося) материала, с четырьмя отверстиями для нити, края отшлифованы двусторонней шлифовкой под наклонным углом, двухстороннего пришивания, цвет - защитный серый или коричневый. На внутренней стороне куртки и брюк крепится этикетка по уходу за униформой (размеры этикетки 4-4,5 см х 5-5,5 см), на которой должны быть указано: наименование организации-производителя, размер-рост, состав ткани и информация по уходу (температура воды для стирки 300 ° С, глажка и химчистка). Этикетка должна быть прикреплена ко второй пуговице вверху куртки, на этикетке должны быть указаны наименование ассортимента, размер, наименование организации-производителя, год выпуска. Упаковка: в стопках, по 10 комплектов в стопке, ассортимент (каждый комплект) - в прозрачном полиэтиленовом пакете, по 1-му комплекту в 1-м пакете. Размеры стопок должны соответствовать размеру униформы, чтобы униформа не смялась. Стопки - с маркировкой, на этикетках должны быть указаны наименование ассортимента, количество, размеры, наименование организации-производителя, месяц и год изготовления. Допустимое отклонение всех параметров составляет 2%. Произовдятся в размерах-росте от 44/2 до 64/6. Для проверки фасона и размеров боевой формы на предмет соответствия спецификации до изготовления заказчику предоставляются 3 комплекта (размера-роста 48/4, 52/3, 58/2) тестовых образцов продукции. После согласования точности заказа с заказчиком исполнителю для производства партии предоставляются данные о размере и росте, и количественные данные о группах крови. |